ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ»
ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ЗАО
"ЕРЕВАНТРАНС"

ՀՀ, 0031, ք.Երևան, Լենինգրադյան 16
☎ (011)390244

«15» 06 2022թ.

№ Լ-1002

«ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝00244414)ՏՆՕՐԵՆ՝
պարոն Տ. ՄԽՈՅԱՆԻՆ
*Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ.Աղաբաբյան փող 1/26*

Հարգելի պարոն Մխոյան

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ի և «ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊԸ-ի միջև 2022թ.-ի մարտի 30-ին կնքված N ԵՏ-ԳՀԾՁԲ-05/22-3-2 գնման պայմանագրի(այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊԸ-ն պարտավորվել է մատուցել «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունները, սակայն Պայմանագրով նախատեսված ծառայությունները «ԼՈՒՔՍՈՐԻԱ» ՍՊԸ-ի կողմից մատուցվել են թերի և ոչ պատշաճ կերպով:

Հաշվի առնելով, վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետով սահմանված պահանջները՝ «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ն 2022թ. հունիսի 15-ից միակողմանիորեն ամբողջությամբ լուծել է N ԵՏ-ԳՀԾՁԲ-05/22-3-2 ծածկագրով գնման պայմանագիրը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք մինչև ս.թ. հունիսի 23-ը ներառյալ ապահովել պայմանագրի կատարման ապահովման գումարի՝ 1576203 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար երկու հարյուր երեք) ՀՀ դրամի չափով, և որակավորման ապահովման գումարի՝ 2364305.4 (երկու միլիոն երեք հարյուր վաթսունչորս հազար երեք հարյուր հինգ ամբողջ չորս տասնորդական) ՀՀ դրամի չափով վճարների գանձումը:

Վերոնշյալի վերաբերյալ «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԲԸ-ն դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ին:

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ ՄԱՐՏԻՆ ՔԱԼԱՇՅԱՆ

*Կատարող՝*
*Վ. Էլոյան*
*+374 95 333 757*

Gmail

Yerevan Trans <yerevantrans.pby@gmail.com>

---

# Պայմանագիրը միակողմանի լուծարելու մասին

1 письмо

---

**Yerevan Trans** <yerevantrans.pby@gmail.com>  15 июня 2022 г., 15:44

Кому: luxoria.llc@list.ru

---

**Գրություն Մատակարար կազմակերպությանը 15.06.2022թ..pdf**
701K